



Լաբորատոր աշխատանք

ՍԵՐՄԵՐԻ ԾԼՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակը: Փորձով ապացույցել, թե սերմեր ծլման համար ինչ պայմաններ են անհրաժեշտ:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Լորու և ցորենի սերմեր, պետրիի թասիկներ, քամիչ թուղթ, ջուր:

Աշխատանքի ընթացքը: Սերմն ընկնելով նպաստավոր պայմաններ ծլում և սիզբ է տալիս նոր բույսի: Սերմի ծլման համար անհրաժեշտ են նրա մեջ առկա կենդանի սաղմ և որոշակի պայմաններ՝ օդ, ջուր, ջերկություն: Որպեսզի համոզվենք, որ սերմերի ծլման համար խոնավություն է հարկավոր, կատարենք հետևյալ փորձը: Երկու փորձանոթում դնենք հավասարքանակությամբ ծլունակ սերմեր: Առաջին փորձանոթում սերմերը թողնենք չոր վիճակում, իսկ երկրորդում մի փոքր ջուր լցնենք: Երկու փորձանոթներն էլ դնենք տաք տեղ: Երեք-չորս օրից կտեսնենք, որ փորձանոթում թրջած սերմերը ծլում են, իսկ չոր սերմերը մնում են անփոփոխ: Ջուրն անհրաժեշտ է սերմերի ծլման համար, քանի որ սերմերը կարող են սննդանյութերը յուրացնել միայն ջրում լուծված վիճակում:











Ջուր չկա

Խոնավ է

Օդ չկա

Սերմի ծլման համար թթվածնի անհրաժեշտությունն ապացուցելու համար կրկին վերցնենք երկու փորձանոթ: Փորձանոթներում տեղավորենք հավասար քանակությամբ ծլունակ սերմեր: Մի փորձանոթում լցնենք այնքան ջուր, որ սերմերն ամբողջությամբ ծածկվեն ջրի հաստ շերտով, իսկ երկրորդ փորձանոթի սերմերը թրջենք: Փորձանոթները դնենք տաք տեղ և երեք-չորս օր հետո ստուգենք փորձի արդյունքը: Առաջին փորձանոթում գտնվող սերմերը կուռչեն, բայց չեն ծլի, իսկ երկրորդ փորձանոթի սերմերը կծլեն: Պարզվում է, որ ջրի հաստ շերտը խոչընդոտել է օդի ներթափանցումը, որն անհրաժեշտ է սերմերի շնչառության և ծլման համար՝ որպես թթվածնի աղբյուր: Այդ պատճառով սերմերը չեն ծլել:

Սերմի ծլման համար ջերմության անհրաժեշտությունն ապացուցելու համար վերցնենք երկու փորձանոթ, քիչ ջրով թրջված սերմերով և ծածկեք ապակիով: Փորձանոթներից մեկը դնենք տաք տեղ, մյուսը՝ սառը: Տաք տեղում դրված փորձանոթի սերմերը ծլում են, իսկ սառը տեղում դրվածը՝ ոչ: Բույսերի մեծ մասի սերմերն ավելի լավ ծլում են 10-15 աստիճանում:

	Դդում	+15
	Վարունգ	+10
	Լոլիկ	+15
	Եգիպտացորեն	+12
	Կաղամբ Շաղգամ Գազար	+5
	Ցորեն	+3
	Սիսեռ Բողկ	+2
	Երեքնուկ Տարեկանի	+1